10.46991/ai.2022.25.1.043

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԳԱԳԻԿ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՎ ՆՐԱ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ

Բանալի բառեր *– Գագիկ Ա, Սմբատ Ա, Աշոտ Երկաթ, սկզբնաղբյուրներ, տիտղոս, Հայոց և Վրաց թագավոր, տիեզերակալ, շահնշահ, թագավորների թագավոր, Մեծ Հայքի արքայից արքա*

Սմբատ Բ Տիեզերակալի մահը և Գագիկ Ա-ի գահակալությունը Անիում

Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-978) միջնեկ որդին՝ Գագիկ Բագրատունին, 990 թ. Անիում գահ բարձրացավ բարդ պայմաններում: Վախճանվել էր Սմբատ Բ Տիեզերակալը (978-990) հասուն, բայց ոչ ծեր հասակում, որի պատճառով Անիի բնակչության և կայազորի շրջանում կասկածներ ծագեցին նրա մահվան վերաբերյալ: Քանի որ այդ լուրը անեցիների շրջանում մեծ արձագանք էր գտել, Գագիկ Ա-ն (990-1018) հրամայեց բացել Սմբատ Բ-ի գերեզմանը և զորքին ու բնակիչներին հավաստիացնել, որ նա իրոք մահացել է[1]: Սակայն այն պահին, երբ բացում էին Սմբատ Բ-ի գերեզմանը, Գագիկն արդեն թագադրվել էր, ըստ որում՝ «ի նոյն աւր»[2] Սմբատ Բ-ի մահվան, այն է՝ նույն օրը կամ ինչն ավելի հավանական է՝ անմիջապես նրա թաղումից հետո:

Գագիկը Անիի գահի գլխավոր թեկնածու էր դարձել այն պատճառով, որ Սմբատ Բ-ն արու զավակ չուներ, ուստի հայոց իշխանաց իշխանի պաշտոնը, որը վերապահվում էր գահաժառանգներին[3], Սմբատ Բ-ն հանձնել էր Գագիկին[4]:

Ըստ Ասողիկի՝ Սմբատ Բ-ն վախճանվել է հայոց 438 թ. (մարտ, 989-մարտ, 990), իսկ Գագիկ Ա-ն՝ թագադրվել «ի ՆԼԸ (438 – *Ա. Ե.*) թուականին, յաւուրս ձմերայնոյ, ի քաղաքին Անւոյ»[5]: Փաստորեն, Սմբատ Բ-ի մահն ու

---

[1] Տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական // «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ., Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Երևան, 2011, էջ 808:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք // «ՎԷՄ», 2014, թիվ 1, էջ 62-75:

[4] Տե՛ս **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ., Վենետիկ, 1785, էջ 869, 871, **Ինճիճեան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 43:

[5] **Ասողիկ**, էջ 808:

Գագիկ Ա-ի թագադրությունը տեղի են ունեցել հայոց 438 թ. ձմռանը, այսինքն՝ 989 թ. դեկտեմբեր կամ 990 թ. հունվար-փետրվար ամիսներին: Մ. Չամչյանցը կարծում էր, որ Սմբատ Բ-ն վախճանվել է 989 թ. նոյեմբերին՝ 12 տարի և 7 ամիս գահակալելուց հետո[1], իսկ Մ. Օրմանյանը՝ 990 թ. սկզբին[2]: Ավելի հավանական է Օրմանյանի տեսակետը, քանզի Սմբատ Բ-ն գահ է բարձրացել հայոց 426 թ. (մարտ, 977-մարտ, 978)՝ հոր մահից (978 թ. հունվարի 3) հետո, և թագավորել 13 տարի[3]: Եթե 978 թվականը նրա գահակալության առաջին տարին էր, ապա 13-րդը 990 թվականն էր: Ուստի «յաւուրս ձմերայնոյ»-ը վերագրելի են հենց 990 թ. հունվար-փետրվար ամիսներին:

Գահակալության շրջանում Գագիկ Ա-ն աչքի է ընկել մեծագործություններով և Անիի թագավորությունը հզորացնելու ջանքերով, որի արդյունքում հիմնականում արժանացել է միջնադարյան հեղինակների գովեստին:

Գագիկ Ա-ի գործունեության գնահատականը պատմագրության մեջ

Գագիկ Ա-ն Բագրատունյաց դարաշրջանի վերջին հզոր գահակալն էր, որը փորձում էր վերականգնել իր նախնիների հզորությունը և տիրապետությունը: Ուստի պատահական չէ, որ նրա նկատմամբ հետաքրքրությունը միշտ էլ մեծ է եղել:

Գագիկ Ա-ի ժամանակակից և նրան գովեստով ներկայացնող պատմիչ Ասողիկն այսպես է նկարագրում արքայի գործունեությունը. «Եւ տիրեաց նա յոլով բերդից եւ գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ եւ Խաչենոյ եւ Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր. եւ ոչ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայսս մինչեւ ցաւր գրելոյ իմոյ զբան յիշատակիս այսորիկ: Զի էր այր սրամիտ եւ վարժ ի պատերազմի եւ առատաձեռն ի բաշխելն. եւ զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց, եւ զկիւրակէիցն զցայգապաշտաւն սաղմոսերգութեամբ կատարէր»[4]: Պարզվում է, որ նա շարունակել է եղբոր գործն ու նրա օրինակով ընդարձակել արքունի տիրույթները Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի հաշվին, եղել է իմաստուն և պատերազմի գործում հմուտ, նաև առատաձեռն, բարեգործ և հավատացյալ:

Արիստակես Լաստիվերցին գրում է. «Յայնմ ժամանակի էր և Հայոց աշխարհին թագաւոր Գագիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբատայ և Գուրգենայ, ի ցեղէն Բագրատունւոյ, այր հզօր և յաղթող ի պատերազմունս. սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց: Ի սորա ժամանակս պայծառացան

---

[1] Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 871:

[2] Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա., Կոստանդնուպոլիս, 1912, § 788, սյուն 1142:

[3] Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

[4] Նույն տեղում, էջ 808:

կարգք եկեղեցւոյ, և լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան»[1]: Նա այնուհետև հավելում է. «Իսկ թագաւորն Գագիկ յերկար ժամանակաւ վարեալ զթագաւորութիւնն, և բարի յիշատակաց արժանի լեալ, ի խորին ծերութեան լուծանէ զկեանս իւր»[2]: Փաստորեն, պատմիչը Գագիկ Ա-ին համարում է պատերազմներում հաղթող թագավոր, որի օրոք երկրում խաղաղություն է տիրել:

Կարևորություն է ներկայացնում նաև Մատթեոս Ուռհայեցու երկում Գագիկին նվիրված, բայց երբեմն Աշոտ Գ Ողորմածին վերագրված նկարագրությունը: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ ուրախություն էր տիրում Հայոց աշխարհում «յաղագս քաջութեանն Գագկայ, վասն զի էր կորովի և այր պատերազմող»[3]:

Սմբատ սպարապետը տեղեկացնում է, որ «... թագաւորէ Գագիկ Բագրատունի տանն Հայոց: Որ էր որդի Աշոտոյ, եւ Աշոտ՝ որդի Աբասայ, եւ Աբաս՝ որդի Սմբատայ: Էր թագաւորս այս քաջ, բարետեսիլ եւ ահարկու, ողորմած եւ քաղցր ի վերայ ամենեցուն, զարդարեալ ամենայն բարեձեւութեամբ՝ հանգոյն նախնի թագաւորաց սրբոց, եւ յաղթող ի պատերազմունս թշնամեացն Քրիստոսի: Որ եւ օգնականութեամբն Աստուծոյ զօրացեալ խաղաղեցոյց զաշխարհն ըստ իւրաքանչիւր կերպի, զեկեղեցականս եւ զիշխանս, զռամիկս եւ որ ընդ իշխանութեամբ նորա էին. պայծառացան եւ եկեղեցիքն խաւարեալ եւ կործանեալ յազգացն Մահմետի եւ ամենեքեան առհասարակ գոհանային զՏեառնէ Աստուծոյ»[4]: Ըստ էության, նրա և նախորդ հեղինակների տեղեկությունները նույնական են:

Նշենք նաև, որ Գագիկ Ա-ի կինը՝ Կատրանիդեն, անդրադառնալով նրա գահակալությանը, այն ներկայացնում է վերամբարձորեն: Թագուհին Անիի Մայր Տաճարի արձանագրություններից մեկի փորագիրներին թելադրել է հետևյալ տողերը. «ի մեծափառ թագաւորութեան Գագկայ Հայոց եւ Վրաց Շահնշահի»[5]:

Ակնհայտ է, որ Գագիկ Ա-ն սկզբնաղբյուրներում հիշատակված է որպես իմաստուն, բարեգործ և քաջ արքա, որի օրոք երկիրը խաղաղվել է ու զարգացել, նա հաջող պատերազմներ է վարել և Հայաստանի թշնամիներին պարտության մատնել ու սարսափեցրել:

Պատահական չէ, որ սկզբնաղբյուրներում Գագիկ Ա-ին առնչվող տեղե-

---

[1] «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 25-26:

[2] Նույն տեղում, էջ 26:

[3] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը՝ Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 8:

[4] «Տարեգիրք Սմբատայ սպարապետի», Վենետիկ, Ս. Ղազար, 1959, էջ 1-2:

[5] «Վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց», կազմյաց Կ. Կոստանեանց, ՍՊԲ, 1913, էջ 13:

կությունների հիման վրա պատմագրության մեջ նրա մասին արտահայտվել են դրանց հար և նման տեսակետներ: Ի վերջո, արձանագրվել է, թե Գագիկ Ա-ի օրոք Բագրատունյաց Հայաստանը հասել է հզորության գագաթնակետին:

Մ. Չամչյանցը Գագիկ Ա-ի գահակալությունը ներկայացնելիս հիմնականում բավարարվում է պատմիչների վերոհիշյալ գնահատականները մեջբերելով[1]:

Մ. Օրմանյանը գտնում է, որ Գագիկ Ա-ի գահակալության սկզբին հայրապետական աթոռը բարձրացած Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի ժամանակը «Հայաստանի լարաբաժին թագաւորութեանց գագաթնակէտը կրնայ սեպուիլ, այնչափ բազմաթիւ եղած էին ինքնուրոյն աւատական իշխանութիւնները, որոնք մէկմէկ գաւառներ սեփականելով ինքնուրոյն կը կառավարէին, և ամէնքն ալ թագաւոր անունը կը գործածէին»[2], այսինքն՝ Գագիկ Ա-ի գահակալության ժամանակաշրջանը համարում է Բագրատունյաց թագավորության առավելագույն մասնատման փուլ:

Ա. Գրենի և Ռ. Գրուսսեի կարծիքով՝ Գագիկ Ա-ի գահակալության շրջանում Բագրատունյաց հարստությունը հասել է հզորության գագաթնակետին[3]: Գագիկ Ա-ի գահակալությունը Բագրատունյաց թագավորության առավելագույն վերելքի ժամանակաշրջան է համարում նաև Ռ. Մաթևոսյանը[4]:

Ըստ Ս. Պալասանյանի՝ «Գագիկ Ա ... իւր իմաստութեամբ և մեծագործութեամբ Բագրատունեաց տան փառքն ու պարծանքն եղաւ (990-1020): Նորա երեսնամեայ թագաւորութիւնը մշտնջենական խաղաղութեան և ազգային յառաջադիմութեան ժամանակ եղաւ. արտաքին թշնամիները նորա զօրութիւնից պատկառելով՝ չհամարձակեցան անհանգիստ անել նորան, իսկ սահմանակից հայ իշխանները օգնութիւն գտնելով նորանից՝ սէր ու յարգանք կապեցին նորա վրայ»[5]:

Լեոն, որ Գագիկին համարում էր Սմբատ Բ-ի մահվան կազմակերպիչը, գրում է, որ նա «իր երկարատև թագավորության գեղեցիկ գործերով մոռացնել տվեց եղբայրասպանի իր ծանր հանցանքը: Նա իր հոր արժանավոր ժառանգ հանդիսացավ և Բագրատունի թագավորների մեջ առաջիններից մեկը եղավ: Իր եղբոր հետ համեմատած՝ նա ավելի քաջ էր, պատերազմասեր և անվախ»[6]:

---

[1] Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 871-873:

[2] **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 800, այուն 1158:

[3] Տե՛ս **Грен А.**, Династия Багратидов в Армении // «Журнал министерства народного просвещения», часть ССХС, С.-Петербург, 1893, ноябрь, с. 110, **Grousset R.**, Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1973, p. 518:

[4] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 160:

[5] **Պալասանեան Ս.**, Պատմութիւն Հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1902, էջ 297-298:

[6] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1967, էջ 605:

Վ. Բարխուդարյանը համոզված է, որ «Գագիկ Ա-ի ժամանակ (990-1020) Բագրատունյաց թագավորությունը հասավ իր տնտեսական ու քաղաքական հզորության գագաթնակետին»[1]: Նա իր տեսակետի հիմնավորման համար մեջբերում է Ասողիկի՝ Գագիկ Ա-ի կողմից Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում բերդեր և գավառներ գրավելու մասին վկայությունը:

Հ. Հարությունյանի կարծիքով՝ Գագիկը Բագրատունիների ամենախոշոր դեմքերից էր՝ պետական-վարչական, դիվանագիտական ու ռազմական մեծ ունակություններով օժտված[2]:

Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Գագիկ Ա-ն «մեծապես ուժեղացրեց Բագրատունյաց թագավորությունը, իրեն ենթարկեց ամբողջ հյուսիսային Հայաստանը և նորից վերականգնեց Շահան Շահի վտանգված հեղինակությունը»[3]:

Հետաքրքրական են Կ. Յուզբաշյանի և Կ. Մաթևոսյանի տեսակետները: Ըստ Կ. Յուզբաշյանի՝ X-XI դդ. սահմանագլխին Շիրակի (Անիի) թագավորությունը բարձրագույն վերելքի ժամանակաշրջանում էր[4]: Նմանապես Կ. Մաթևոսյանը Գագիկ Ա-ի գահակալությունը համարում է «Անիի Բագրատունյաց թագավորության առավելագույն վերելքի շրջանը»[5]: Ըստ նրա՝ Գագիկը «Անիի թագավորների մեջ ամենազորեղն է համարվում»[6]: Կարելի է կարծել, որ հեղինակները նկատի ունեն հենց Անիի թագավորությունը, որը բառի բուն իմաստով այդպիսին էր դարձել Անիի՝ մայրաքաղաք հռչակումից (961 թ.) սկսած, իսկ այնուհետև՝ Բագրատունյաց տիրույթներում Կարսի (975 թ.) և Տաշիրքի թագավորությունների (978 թ.) ստեղծումից հետո իր սահմաններում առավել ևս սեղմվելով՝ ամփոփվել այն տարածքում, որն առկա էր Գագիկ Ա-ի օրոք: Այդ պարագայում Գագիկ Ա-ին պետք է և կարելի է համեմատել միայն Աշոտ Գ Ողորմածի, Սմբատ Բ Տիեզերակալի և Սմբատ Գ-ի (Հովհաննես կոչված) հետ: Հատկապես վերջին երկուսի հետ համեմատությունն անշուշտ Գագիկ Ա-ի օգտին է, և, իրոք, 978-1041 թթ. ընթացքում Անիի թագավորությունը հենց Գագիկ Ա-ի գահակալության շրջանում է հասել իր առավելագույն վերելքին:

Գագիկ Ա-ն Քեմբրիջի «Բյուզանդական կայսրության պատմություն» աշ-

---

[1] **Բարխուդարյան Վ.**, Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում 9-11-րդ դարերում, Երևան, 2017, էջ 57:

[2] Տե՛ս **Հարությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Երևան, 1959, էջ 113:

[3] **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 179:

[4] Տե՛ս **Юзбашян К.**, К хронологии правления Гагика I Багратуни // «Античная древность и средние века», вып. 10, 1973, с. 195:

[5] **Մաթևոսյան Կ.**, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2008, թիվ 3, էջ 9: Տե՛ս նաև *նույնի*՝ Անին և անեցիները, Երևան, 2021, էջ 31:

[6] **Մաթևոսյան Կ.**, Անին և անեցիները, էջ 172:

խատության մեջ ներկայացված է որպես «մեծ»[1], որը հեղինակ Թ. Գրինվուդի վերաբերմունքի արտահայտությունն է, քանի որ սկզբնաղբյուրներում և գիտական հետազոտություններում Գագիկ Ա-ն երբեք «մեծ» չի կոչվել:

Հայագիտության մեջ արմատավորված՝ վերոհիշյալ տեսակետների հիման վրա Հայոց պատմության ակադեմիական հրատարակություններում Գագիկ Ա-ի գահակալությունը համարվել է Բագրատունյաց թագավորության հզորության և ծաղկման գագաթնակետ[2]:

Գագիկ Ա-ի գործունեությանը նվիրված վերջին ուսումնասիրություններից մեկի հեղինակ Հ. Մարգարյանը կարծում է, որ Գագիկ Ա-ի գահակալությունը Բագրատունյաց թագավորության հզորության ժամանակաշրջան համարող հեղինակները հիմնվել են նրա տարածքային ձեռքբերումների, Դավիթ Անհողինի ելույթը ճնշելու, ինչպես նաև եկեղեցաշինական գործունեության վրա՝ ըստ էության առանց դարաշրջանի իրողությունների համակողմանի վերլուծության վերապատմելով միջնադարյան հեղինակների վկայությունները և համակողմանի քննության չենթարկելով Հայաստանի ներքին ու արտաքին դրությունը[3]: Նա գտնում է, որ Գագիկ Ա-ին հաջողվել է Անիի թագավորության սահմանները զգալիորեն ընդարձակել հյուսիսային, արևելյան և հարավային ուղղություններով[4]:

Փաստորեն, հետազոտողները Գագիկ Ա-ի գահակալությունը համարել են ռազմաքաղաքական ու մշակութային վերելքի ժամանակաշրջան, իսկ նրան՝ հաջողակ ռազմաքաղաքական գործիչ, մեծագործ ու բարեգործ: Նրանք, ինչպես իրավամբ նկատել է Հ. Մարգարյանը, հիմնականում պարզապես վերապատմել են պատմիչների տեղեկությունները՝ առանց Գագիկ Ա-ի օրոք Հայաստանի ներքին ու արտաքին դրության քննության, որը հնարավորություն կտար բացահայտել իրադարձությունների ընթացքը, դրդապատճառներն ու բովանդակությունը:

Գագիկ Ա-ին որպես Բագրատունյաց շրջանի հզորագույն տիրակալ ներկայացնող հեղինակները նրան ընդհանրապես չեն համեմատել Բագրատունի առաջին գահակալների՝ Աշոտ Ա-ի (887-891), Սմբատ Ա-ի (891-914), Աշոտ Բ Երկաթի (914-929), Աբասի (929-953) և նույնիսկ Աշոտ Գ Ողորմածի (953-978) հետ, որոնց օրոք Բագրատունյաց թագավորությունը բոլորովին այլ

---

[1] Տե՛ս «The Cambridge History of the Byzantine Empire c. 500-1492», Revised Edition, Edited by Jonathan Shepard, Cambridge University Press, 2019, p. 359:

[2] Տե՛ս **Առաքելյան Բ.**, Բագրատունյաց թագավորությունը X դարի վերջին և XI դարի սկզբներին // «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 134: Տե՛ս նաև **Վարդանյան Վ.**, Բագրատունյաց թագավորության վերելքն ու հզորացումը // «Հայոց պատմություն», հ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 57:

[3] Տե՛ս **Մարգարյան Հ.**, Գագիկ Ա Բագրատունու արտաքին քաղաքականությունը // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2019, թիվ 1, էջ 28:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 30:

կարգավիճակում էր, քան Գագիկ Ա-ի օրոք: Նշված արքաների ժամանակաշրջանում Բագրատունյաց թագավորությունը, հանդես գալով որպես տարածաշրջանային տերություն[1], իր կազմում ընդգրկում էր նաև Այսրկովկասի քրիստոնյա երկրները[2], իսկ Բագրատունի գահակալը իրավական ու գործնական առումներով բարձր էր տարածաշրջանի մյուս գահակալներից[3] և չուներ իրեն հավասարն ու մրցակիցը[4]: Օրինակ՝ Հովհաննես Դրասխանակերտցին այսպես է ներկայացնում Սմբատ Ա-ի նվաճումները. «Եւ այսպէս

---

[1] Տե՛ս **Грен А.**, նշվ. աշխ., էջ 72-73, **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.) (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 71-75:

[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր** (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), Պատմութիւն // «Մատենագիրք Հայոց», հ. Թ., Թ. դար, Անթիլիաս, Լիբանան, 2008, էջ 1041, **Ասողիկ**, էջ 742:

[3] Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Սմբատ Ա-ն հանդես էր գալիս որպես «բոլորից արեւելեայցս գլխաւոր» («Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց» // «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 528), այսինքն՝ գործնականում քրիստոնյա Արևելքի առաջնորդ, իսկ Աշոտ Բ Երկաթը կայսրից «մեծավայելուչ գահիւ պատուի առեալ քան զամենայն գահերէցս, ընկալեալ զփառաց փարթամութիւն, ո՛չ իբրեւ զայլս ոմանս պատուաւորս, այլ իբրեւ զթագաւորազուն բողբոջ, գրեթէ ընդ իւրով իսկ կայսր զնա հարթայարմար ցուցանէր եւ թագաւորական հրահանգաց հանդիսիւ ճոխացուցանէր» (նույն տեղում, էջ 533): Կոստանդին Ծիրանածինը վկայում է, որ Բյուզանդիայի արքունիքը ինչպես տարբեր պետությունների, այնպես էլ Հայաստանի և Այսրկովկասի մեծամեծերին ուղարկած նամակներին կցում էր տարբեր կշռի ոսկե կնիքներ, որոնց քաշի ծանրությամբ էլ, փաստորեն, չափվում էր նշված մեծամեծերի նշանակությունը կայսրության համար և նրանց դերը միջազգային գործերում: Առաջին տեղում խալիֆայությունն էր. խալիֆին ուղարկվող նամակի կնիքը չորս սոլիդ (մոտ չորդ դահեկան) էր կշռում: Բագրատունի տիրակալը ստանում էր երեք սոլիդ կշռով կնիք ունեցող նամակ, նույնքան էլ՝ Գագիկ Արծրունին, երբ ստացել էր գերագահություն Հայաստանում: Հայաստանի և Այսրկովկասի մյուս մեծամեծերը ստանում էին երկու սոլիդանոց կնիքով նամակներ (տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151-152): Ըստ Հ. Բարթիկյանի դիպուկ դիտարկման՝ Բագրատունի տիրակալին, այդպիսով, Բյուզանդիայում շատ ավելի մեծ նշանակություն էին տալիս, քան տարածաշրջանի մյուս պետական միավորների տիրակալներին (տե՛ս **Բարթիկյան Հ.**, Կոստանդին Ծիրանածինը և նրա գրական ժառանգությունը // **Կոստանդին Ծիրանածին**, էջ LIV-LV):

[4] Ըստ Ա. Գրենի՝ այսրկովկասյան գրեթե բոլոր իշխանները սկսեցին ենթարկվել Աշոտ Ա Բագրատունուն, քանի որ Հայ Բագրատունիների մեջ էին տեսնում մուսուլմանական իշխանություններից պաշտպանվելու գլխավոր հույսը: Դրա հետևանքով Այսրկովկասի մեծագույն մասը ընդգրկվեց Հայ Բագրատունիների տերությունը ամ կամ ինչպես ուսումնասիրողն է անվանում՝ Կովկասյան թագավորությունում: Վերջինս սկսեց վախ ներշնչել նույնիսկ արաբներին, քանի որ նրանք Բագրատունիների այդչափ արագ հզորացում չէին սպասում: Բյուզանդիան սկսեց Բագրատունիների տերության հետ դաշնակցային հարաբերություններ կառուցել: Տե՛ս **Грен А.**, նշվ. աշխ., էջ 72-73: Հայ Բագրատունիների կողմից Այսրկովկասի երկրներին տիրելու մասին տե՛ս նաև **Анчабадзе З.**, Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959, с. 125, **Мкртумян Г.**, Грузинское феодальное княжество Кахети в VIII-XIвв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, с. 87-88, **Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с. 68, **Բարթիկյան Հ.**, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ. // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1996, թիվ 2, էջ 27-28:

ձգտեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս՝ քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եգերացւոց և մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և ցԾանարս մինչև ցԴուռն Ալանաց, առեալ ևս յինքն և զամրոց դրան պահակի նոցա. և անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր: Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ, որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»[1]: Ակնհայտ է, որ եթե Սմբատ Ա-ի նվաճումների նկարագրությունը համեմատում ենք Գագիկ Ա-ի նվաճումների մասին Ասողիկի՝ «Եւ տիրեաց նա յոլով բերդից եւ գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ եւ Խաչենոյ եւ Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր» տեղեկության հետ, նվաճումների մասշտաբների տարբերություններն ակնհայտ են. Սմբատ Ա-ն տիրել է Հայաստանի շրջակա երկրներին, իսկ Գագիկ Ա-ն՝ Հայաստանի գավառներին, որոնք այս կամ այն հայկական թագավորության կամ իշխանության կազմում էին: Գագիկ Ա-ի օրոք Հայաստանն ընդհանրապես և Բագրատունյաց ընդարձակ տիրույթները մասնավորապես մասնատվել էին, վերջիններիս տարածքում ձևավորվել էին Կարսի և Տաշիրքի թագավորությունները, որի հետևանքով մարդկային, տնտեսական ու տարածքային զգալի ռեսուրսների կորստից էապես թուլացած Անիի տիրակալը ոչ միայն կորցրել էր ազդեցությունը Այսրկովկասի քրիստոնյա երկրների նկատմամբ, այլ նաև կանգնել տարածաշրջանային մի շարք հզոր դերակատարների առկայության փաստի առաջ, որոնք էապես սահմանափակում էին նրա գործունեության ազատությունը: Իհարկե, Գագիկ Ա Բագրատունին հզորության ու միասնության ձգտող, նախաձեռնող ու գործունյա գահակալ էր, սակայն իրականությունը, որի պայմաններում նա գործում էր, բոլորովին այլ էր, և նա Հայաստանում, Այսրկովկասում և շրջակա երկրներում, ինչպես նաև Բյուզանդիայի տեսանկյունից չուներ այն կշիռն ու կարևորությունը, որ ունեին Բագրատունի առաջին գահակալները:

Ի վերջո, անհրաժեշտ է հավելել, որ խնդրով այս կամ այն չափով զբաղված հետազոտողների կողմից օգտագործվող «Անիի թագավորություն» անվանումն իսկ նշանակում է, որ այն ներկայացնում էր Բագրատունիների տոհմական և արքունի տիրույթներում ձևավորված Բագրատունյաց երեք թագավորություններից թեև գերական, բայց միայն մեկը: Այն իր մարդկային ու տնտեսական ռեսուրսներով ուղղակի անհամեմատելի էր Բագրատունիների կենտրոնական իշխանության նախկին հզորության հետ:

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 457:

Գագիկ Ա-ի «Շահնշահ Հայոց և Վրաց» և «Արքայից արքա Հայոց Մեծաց» տիտղոսներն ու Անիի տիրակալի կարգավիճակը

Պատմիչների երկերում, ինչպես տեսանք, առանձնակի մանրամասնություններ չկան Գագիկ Ա-ի տիտղոսների վերաբերյալ: Փոխարենը, վիմագրերում, ի տարբերություն դրանց, Գագիկ Ա-ի տիտղոսները ներկայացված են ամբողջովին ու հստակորեն՝ հնարավորություն տալով կատարել էական լուսաբանումներ արքայի կարգավիճակի, հայկական և հարևան միջավայրերում նրա տեղի ու դերի ընկալման հարցերում:

Գագիկ Ա-ի կինը՝ Կատրանիդեն, Անիի Մայր տաճարի գլխավոր արձանագրությունը փորագրողներին թելադրել է հետևյալ տողերը. «Ի:ՆԾ: թ[ուին] Հայոց (1001/1002 թ. – *Ա. Ե.*) ... ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց շահանշահի, ես Կատրանիդէ Հայոց թագուհի ... հրամանաւ առն ի-մո Գագկա շահանշահի, շինեցի զՍուրբ Կաթաղիկէս...»[1]: Որպես «Հայոց և Վրաց շահնշահ» Գագիկ Ա-ն հիշատակված է նաև 1036 թ. վիմագիր ընծայագրերից մեկում[2]: «Շահնշահ» տիտղոսով Գագիկ Ա-ն հանդես է գալիս նաև բազմաթիվ այլ վիմագրերում[3]: Սակայն հարկ է արձանագրել, որ Անիի Մայր տաճարի և վերոհիշյալ արձանագրությունների մեջ, ի տարբերություն այլ վիմագրերի, «շահնշահ» տիտղոսը ներկայացված է ամբողջական տեսքով՝ «Հայոց և Վրաց շահնշահ» ձևով: Ի դեպ, իր իսկ կողմից գրված արձանագրություններում Գագիկ Ա-ն իրեն պարզապես «շահնշահ» է կոչում[4]:

Կարևոր է նշել, որ Գագիկ Ա-ն որպես շահնշահ հիշատակված է նաև վրացական սկզբնաղբյուրներից մեկում[5], ինչը վկայությունն է այն բանի, որ նրա «շահնշահ» տիտղոսը հայտնի և ընդունված էր նաև քրիստոնյա Այսրկովկասում:

Գագիկ Ա-ի տիտղոսների հստակեցման առումով հատկապես շահեկան է Աշտարակի 1013/1014 թ. արձանագրությունը, որտեղ նրա անունից շարադրված է հետևյալը. «...կամ եղեւ ինձ՝ Գագիկա, հզաւր եւ տիեզերակալ շահինշահի եւ Հայոց Մեծաց արքայից արքայի...: Ետու ես՝ Գագիկ շահին-

---

[1] «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 35: Գագիկը որպես Հայոց և Վրաց շահնշահ է հիշատակված նաև Անիի Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու արձանագրություններից մեկում: Տե՛ս նույն տեղում, էջ 48:

[2] «Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշինու», տեղւոյն վրայ հաւաքեց եւ հրատարակեց հանդերձ ֆրանսերէն թարգմանութեամբ Կ. Յ. Բասմաջեան, Պարիս, 1931, էջ 360-361:

[3] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 10, 12-14, 16-17, 19-22: Տե՛ս նաև «Պատմութիւն Հռոմոսին վանաց ի Շիրակ եւ վանօրէից ոմանց ի նմին տեղագրութիւնք», արարեալ յԱբէլ Արքեպիսկոպոսէ Մխիթարեանց, ի Վաղարշապատ, 1870, էջ 52:

[4] «Վիմական տարեգիր», էջ 13:

[5] Տե՛ս «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի // «ԼՀԳ», 1989, թիվ 9, էջ 74:

շահ...»[1]: Ակնհայտորեն շեշտադրված է «շահնշահ» տիտղոսը, որն ուներ իր պատճառները:

Անդրադառնալով «շահնշահ» տիտղոսին՝ փաստենք, որ այն նշանակում է «թագավորների թագավոր», որն իր արձանագրումն է գտել Ասողիկի («[Աշոտ Երկաթը] զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն՝ թագաւորաց թագաւոր»[2]) և Վարդան վարդապետի [Աշոտ Երկաթը վերադառնալով Բյուզանդիայից՝ «...կոչեցաւ ի վերայ նոցա (իմա՝ ի վերա տեղական թագավորների՝ Աշոտ Շապուհյանի, Գագիկ Արծրունու, Ատրներսեհ Բագրատունու) շահնշահ»[3]] տեղեկություններում: Հայտնի է, որ Բագրատունիների մեջ առաջինը «շահնշահ» տիտղոսը կրել է Աշոտ Երկաթը[4], որից հետո այն դարձավ Բագրատունի գահակալների ժառանգական տիտղոս: Աշոտ Երկաթի նախորդները, տիրելով Հայաստանին ու Վիրքին, համապատասխանաբար կրում էին «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը[5]: Ըստ Ասողիկի, օրինակ, Սմբատ Ա-ն թագավորեց՝ «տիրելով բոլոր հայրենեաց իւրոց՝ Հայոց եւ Վրաց»[6]: Ասել է՝ Սմբատը ժառանգեց մի թագավորություն, որի մեջ մտնում էին Հայքն ու Վիրքը: Պատահական չէ, որ նա իր հիմնական՝ «տիեզերական» տիտղոսից բացի կրում էր նաև «Հայոց և Վրաց թագավոր» տիտղոսը[7]: Բագրատունիների՝ «Հայոց և Վրաց իշխանաց իշխան», իսկ այնուհետև՝ «Հայոց և Վրաց թագավոր» լինելու իրողությունն արտացոլված է նաև վրացական[8] և արաբական[9] սկզբնաղբյուրներում: Ակադեմիկոսներ Ա. Հովհաննիսյանը և Ս. Երեմյանը կարծում են, որ Աշոտ Երկաթը խալիֆայի կողմից հռչակվել է «Շահնշահ Հայոց և Վրաց», որով ճանաչվել է նրա գերագահությունը մյուս թագավորությունների (Վրաց, Աղվանից) նկատմամբ[10]: Փաստորեն, «թագավոր Հայոց և Վրաց»-ի և «շահնշահ Հայոց և Վրաց»-ի միջև տարածքային տարբերություններ չկային, դրանք բովանդակային էին: «Թագավոր Հայոց և Վրաց»-ից անցումը «շահնշահ Հայոց և Վրաց»-ի Բագրատունյաց

---

[1] **Սաղումյան Ս.**, Գագիկ Ա թագավորի նորահայտ արձանագրությունն Աշտարակում // «ԼՀԳ», 1989, թիվ 9, էջ 91-92:

[2] **Ասողիկ**, էջ 748:

[3] «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 87:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 551: Տե՛ս նաև **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները // «ԼՀԳ», 1979, թիվ 1, էջ 76:

[5] Տե՛ս **Երեմյան Ս.**, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները // «Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», թիվ 2, Երևան, 1947, էջ 109, 111, **Тер-Гевондян А.**, Армения и Арабский халифат, Ереван, 1977, с. 238:

[6] **Ասողիկ**, էջ 742:

[7] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 1042-1043:

[8] Տե՛ս **Анчабадзе З.**, նշվ. աշխ., էջ 124-125:

[9] Տե՛ս **Ibn Zāfir**, Akhbār al-duwal al-munqatiʿa, ğ. 1, Irbid, 1999, ṣ. 63:

[10] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 120, **Еремян С.**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке // «ԼՀԳ», 1971, թիվ 3, էջ 6:

թագավորության կազմում մանր թագավորությունների (Աղվանից, Վրաց, Վասպուրականի) ի հայտ գալու հետևանք էր: Բագրատունի տիրակալն այլևս միակ թագավորը չէր, բայց առաջինն ու գերագահն էր Հայաստանի և քրիստոնյա Այսրկովկասի թագավորների շրջանում: Ընդ որում՝ կոչվելով ոչ թե «Հայոց և Վրաց արքայից արքա», այլ «Հայոց և Վրաց շահնշահ»՝ Բագրատունի գահակալները շեշտադրում էին իրենց տիտղոսի ու կարգավիճակի՝ միջազգայնորեն ճանաչված լինելը, քանզի Աշոտ Երկաթն այն ստացել էր խալիֆայից՝ Ատրպատականի ամիրայի միջոցով[1]:

Աշոտ Երկաթի գահակալության վերջում «շահնշահ Հայոց և Վրաց» տիտղոսն ամենայն հավանականությամբ փոխանցվեց Գագիկ Արծրունուն (908-943)[2], ուստի պատահական չէ, որ Աբաս թագավորը սկզբնաղբյուրներում այդ տիտղոսով հիշատակված չէ: Սակայն նրա որդին՝ Աշոտ Գ Ողորմած թագավորը, հենց գահակալության սկզբից հայտնի էր որպես շահնշահ: Ասողիկն ընդհանրապես գրում է, որ նա «Շահանշահ կոչիւր»[3]: Նա արաբական սկզբնաղբյուրներից մեկում հանդես է գալիս որպես Հայաստանի և Վիրքի թագավոր՝ «շահնշահ» տիտղոսով: Այնտեղ վկայված է, որ 953 թ. «Վրաստան նահանգի և Հայաստանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշոթ իբն ալ-Աբբաս (իմա՝ Աշոտ Գ՝ որդի Աբասի – *Ա. Ե.*) և «շահնշահ» տիտղոսն էր կրում»[4]: Պարզ է, որ նոր միայն գահին բազմած Աշոտ Գ Ողորմածը Հայոց ու Վրաց թագավորի կարգավիճակը և «շահնշահ» տիտղոսը ժառանգել էր Աբաս թագավորից, որը Գագիկ Արծրունու մահից (943 թ.) հետո, փաստորեն, կարողացել էր յուրացնել այն[5]: Աշոտ Գ-ն «շահնշահ» տիտղոսով հիշատակվում է նաև մի շարք վիմագրերում[6], իսկ այլ սկզբնաղբյուրներում՝ իբրև «թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց»[7]: Իսկ Սմբատ Բ-ն «տիեզերակալ» տիտղոսից[8] բացի

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 551:

[2] Տե՛ս **Yeghiazaryan A.**, Gagik Artsruni – «King of Armenia and Georgia» // «Բ Հ», 2016, թիվ 1, էջ 77-97:

[3] **Ասողիկ**, էջ 755:

[4] **Minorsky V.**, Studies in Caucasian History, London, 1953, № 3, p. 10, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին // «Բանբեր Մատենադարանի», 1962, թիվ 6, էջ 477:

[5] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աբաս Բագրատունի. թագավոր Հայոց, Երևան, 2017, էջ 79-80:

[6] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 9-10, 12:

[7] Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.)», պրակ I, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով: Կազմեց՝ Հ. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 5: Տե՛ս նաև **Տեր-Վարդանեան Գ., Սահակեան Ջ.**, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին // «Էջմիածին», 2012, թիվ 7, էջ 98:

[8] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 90 («Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ»), **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 162 («զոր Սմբատ տիեզերակալն էր բերել տուեալ ի Հնդկաց»): Տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 130:

կրում էր նաև «շահնշահ»[1] և, մասնավորապես, «Անիի շահանշահ»[2] տիտղոսնե-րը:

Ուստի Գագիկ Ա-ի կրած «Հայոց և Վրաց շահնշահ» տիտղոսը Աշոտ Երկաթից ի վեր Բագրատունիների շրջանում ամենատարածվածն էր: «Շահնշահ» տիտղոսը կրում էր նաև Գագիկ Ա-ի որդի Հովհաննես Սմբատը[3]:

Համադրելով վերոասացյալը՝ կարող ենք նշել, որ խնդրո առարկա տիտղոսը ամբողջովին ունեցել է հետևյալ տեսքը՝ «Հայոց և Վրաց շահնշահ», ինչպես հիշատակված է մի շարք սկզբնաղբյուրներում, բայց հաճախ ներ-կայացվել է միայն «շահնշահ» ձևով:

Հավելենք նաև, որ ի տարբերություն Սմբատ Բ-ի, որը հիշատակվում է հիմնականում «տիեզերական» տիտղոսով, Գագիկ Ա-ի գահակալության շրջանում «շահնշահ» տիտղոսի ընդգծումը, անկասկած, պայմանավորված էր այդ դարաշրջանում Անիի տիրակալի գերագահ դիրքի ամրագրման ան-հրաժեշտությամբ: Գագիկ Ա-ի օրոք ավատատիրական մասնատվածու-թյունը Հայաստանում հասել էր ծայրահեղ աստիճանի, ուստի նրա՝ որպես շահնշահ կամ թագավորների թագավոր հանդես գալը բխում էր երկրում մի քանի թագավորների առկայության պարագայում սեփական գերակա դիրքի ընդգծման ցանկությունից: Վերջինս այնքան ակնհայտ էր և գործնական հաջողություններ էր արձանագրել, որ Գագիկ Ա-ն «շահնշահ» տիտղոսով հիշատակվում է նաև վրացական սկզբնաղբյուրներից մեկում:

Հարկ է անդրադառնալ նաև այն իրողությանը, որ, ինչպես նշվեց, Գագիկ Ա-ի նախորդները, օրինակ, նրա հայր Աշոտ Գ Ողորմածը, հանդես էին գա-լիս որպես «Հայաստանի և Վրաստանի շահնշահ», քանի որ գերակայում էին նաև Վիրքում, մինչդեռ Գագիկ Ա-ի դարաշրջանում Վիրքը նրա ուղղակի ենթակայությունից դուրս էր: Ուստի նրա՝ «Հայոց և Վրաց շահնշահ» տիտ-ղոսը կրելն ունի նաև հավելյալ բացատրության կարիք: Ասողիկը վկայում է, որ Վիրքի մի շարք շրջաններ գտնվում էին Գագիկ Ա-ի ստորակա Տաշիրքի թագավորության կազմում և գերակայության ներքո [«Իսկ եղբաւրորդին նոցա՝ Սմբատայ (Սմբատ Բ – *Ա. Ե.*) եւ Գագկայ (Գագիկ Ա – *Ա. Ե.*), Դաւիթ՝ որդի Գուրգենայ (Տաշրաց առաջին թագավորը) հանդերձ եղբարբն իւրով Սմբատաւ ունի զկողմանս Տաշրաց եւ զՎրաց դաշտի. զՇամշուլտեայ մեծ քաղաքանիստ դղեակն նիստ արքունական պատրաստեալ ինքեան՝ արա-գապէս տիրէ քաղաքին Դմանեաց, հնազանդեցուցանէ եւ զամիրայն Տփղեաց քաղաքաւն իւրով»[4]], և, թերևս, հենց այս իրողությունն էլ իրավական առու-մով հիմնավորում էր Գագիկ Ա-ի՝ որպես «Հայոց և Վրաց շահնշահ» հանդես գալու իրողությունը:

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 9:

[2] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հաղբատի արաբերեն արձանագրությունը, էջ 73-74:

[3] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 19, 21:

[4] **Ասողիկ**, էջ 809:

Ի վերջո, անհրաժեշտ է անդրադառնալ նաև Աշտարակի վերոհիշյալ արձանագրությանը, որտեղ Գագիկ Ա-ն ներկայացնում է իր կրած տիտղոսների հիմնական ձևակերպումները՝ հնարավորություն տալով կատարելու նոր բացահայտումներ: Այնտեղ նա իրեն զուգահեռաբար կոչում է «հզաւր եւ տիեզերակալ շահինշահ» և «Հայոց Մեծաց արքայից արքա»: Ուստի փաստենք, որ Գագիկ Ա-ն կրում էր երկու հիմնական տիտղոս՝ «Շահնշահ [Հայոց և Վրաց]» և «Արքայից արքա Հայոց Մեծաց»:

Արդ, կարևորվում է Գագիկ Ա-ի «Հայոց Մեծաց արքայից արքա» («Մեծ Հայքի արքայից արքա») տիտղոսի քննությունը: Այն, ըստ էության, Մեծ Հայքում Անիի Բագրատունի տիրակալի գերագահության ամրագրումն էր, Գագիկ Ա-ի նախորդների շրջանում գրեթե հայտնի չէ, թեև մասամբ նշմարելի է Անիի Գագիկի եկեղեցու արձանագրության մեջ. «...հրամանաւ Գագկա Շահանշահ[ի], որդո Աշոտոյ արքայից արքայի»[1]: Ավելին, Մեծ Հայքի հիշատակությունը ևս խիստ հազվադեպ երևույթ է Բագրատունյաց շրջանի հեղինակների երկերում: Եզակի հիշատակություններից մեկը պահպանվել է Ասողիկի երկում. «...թագաւորէ Աշոտ (իմա՝ Աշոտ Ա – *Ա. Ե.*) Հայոց Մեծաց»[2]: Իսկ օրինակ՝ կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին Բագրատունի արքաներին «Մեծ Հայքի թագավոր» չի կոչում, այլ պարզապես Հայաստանի կամ Հայոց թագավոր[3]: Սակայն կաթողիկոսի մեջբերած՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոսի հետ իր նամակագրության մեջ նա թե՛ պատրիարքի կողմից է կոչվում «Մեծ Հայքի կաթողիկոս», թե՛ ինքն է իրեն այդպես անվանում պատասխան նամակում[4]: Թերևս պատճառն այն էր, որ բյուզանդական արքունիքը և եկեղեցին շարունակում էին երկիրը Մեծ Հայք կոչել[5], ուստի՝ ի պատասխան նույն կերպ վարվել է նաև կաթողիկոսը:

Գագիկ Ա-ի նախորդների շրջանում «Մեծ Հայքի թագավոր» կոչվելու եզակի դեպքերից մեկը վկայում է կաթողիկոս Անանիա Մոկացին: Սկզբում նրա հիշատակություններում ևս Գագիկ Արծրունին և Աբաս Բագրատունին հանդես են գալիս որպես «Հայոց թագավորներ»: Ականատես հեղինակը 941

---

[1] «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 42:

[2] **Ասողիկ**, էջ 734:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 445: Նա գրում է՝ «Աշոտ (իմա՝ Աշոտ Ա – *Ա. Ե.*) արքայ Հայոց» (էջ 448); Սմբատը «...ելանէ ... պայազատեալ զբնաւ Հայաստանեայսս» (էջ 485); դավադիրները կամենում են Սմբատ Ա-ին սպանել և Ատրներսեհ Բագարատունուն «կացուցանել հրամանատար (բառացի՝ տեր, իշխան, կառավարիչ, այստեղ՝ թագավոր – *Ա. Ե.*) Հայաստանեայցս» (էջ 504); «...զթագաւորել Հայոց ոստիկանն նմա (իմա՝ Գագիկ Արծրունուն – *Ա. Ե.*) հաւատայր» (էջ 525); «...Աշոտ որդի Սմբատայ, զոր թագաւորեցուցին ... ի վերայ Հայաստանեայցս» (էջ 546); արաբ ոստիկանը Գագիկ Արծրունուն «երեքկին (իմա՝ երրորդ անգամ) ... պսակեալ ի վերայ Հայաստանեայցս» և այլն:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 522, 525:

[5] Տե՛ս օրինակ՝ **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10, 11, 151, **Յուզբաշյան Կ.**, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը //«ԼՀԳ», 1974, թիվ 1, էջ 35-43 և այլն:

թ. մասին գրում է. «...յաւուրս արի եւ քաջատոհմիկ հզաւրացն երկոցունց ինքնակալացն Հայոց թագաւորացն քրիստոսապսակեալ տեառնն Գագկայ Արծրունոյ Հայոց թագաւորի եւ տեառնն Աբասայ Բագրատունոյ խաղաղասիրի եւ հեզահամբոյր հզաւրի եւ Մեծի Հայոց արքայի»[1]: Տեղեկությունից պարզվում է, որ Վասպուրականում և Այրարատում իշխող երկու թագավորները կառավարում էին որպես «Հայոց թագավոր» կամ «Հայոց արքա»: Ճիշտ է՝ տեքստում Աբասին վերագրվող «հզաւրի եւ Մեծի Հայոց արքայի» հիշատակության մեջ, ի տարբերություն «հզաւր»-ի, «Մեծի»-ն ներկայացված է մեծատառով, և տպավորություն է ստեղծվում, թե «Մեծի Հայոց»-ը կարելի է ընկալել որպես «Հայոց Մեծաց» կամ «Մեծ Հայք», սակայն իրականում այդպես չէ: Իսկ «Մեծի»-ն միայն սխալմամբ է մեծատառով ներկայացված, այսինքն այն ոչ թե աշխարհագրական անվան մաս է, այլ արքային վերաբերող ածական, ուստի հիշատակությունը մակաբերելի է որպես «հզոր և մեծ Հայոց արքայի»: Ըստ որում՝ հեղինակը հայոց երկու թագավորների կարգավիճակները գոնե ձևականորեն տարբերակելու համար մեկին կոչել է «Հայոց թագավոր», իսկ մյուսին՝ «Հայոց արքա»: Անկասկած, կաթողիկոսը, Բագրատունի վեհապետի՝ Հայաստանում առկա մյուս թագակիրների նկատմամբ գերագահ հանդիսանալու իրողությունից ելնելով, նրան մեկ այլ տեղեկության մեջ կրկին «մեծ» է կոչում: Նա մոտ 949 թ. Կապանից Շիրակ էր վերադառնում՝ «ի հանդիպումն բարերջանիկ եւ վեհի մեծի արքային Աբասայ Հայոց թագաւորին...»[2]: Բայց ահա Աշոտ Գ Ողորմածին Անանիա Մոկացին կոչում է «...թագաւորն բարեպաշտ Աշոտ Հայոց Մեծաց...»[3]՝ Մեծ Հայքի թագավոր, որը, իհարկե, տարբերվում է «Մեծ Հայքի արքայից արքա»-ից և, ըստ էության, ոչ թե տիտղոս է, այլ Աշոտ Գ Ողորմածի նկատմամբ հեղինակի վերաբերմունքի արդյունք: Մեկ այլ դեպքում Անանիա Մոկացին Աշոտ Գ Ողորմածին պարզապես որպես «Հայոց թագավոր» է հիշատակում[4]:

Սակայն խնդրո առարկա դարաշրջանից շատ ավելի ուշ իր աշխատությունը շարադրած Մատթեոս Ուռհայեցին Աշոտ Գ Ողորմածին հիշատակում է որպես «Մեծ Հայքի շահնշահ»: Բյուզանդիայի կայսր Հովհաննես Չմշկիկի՝ Աշոտ Գ Ողորմածին ուղղած նամակում, որը թարգմանաբար ներկայացված է Մատթեոս Ուռհայեցու աշխատությունում, Բագրատունի տիրակալը անվանված է «Աշոտ շահնշահ Հայոց Մեծաց»[5], որը, ըստ էության, «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսի այլահունչ հիշատակությունն է: Այն

---

[1] «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն» // «Մատենագիրք Հայոց», հ. Ժ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 256:

[2] Նույն տեղում, էջ 268:

[3] Նույն տեղում, էջ 273:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 24:

արտահայտում է հայոց թագավորի գերակա դիրքը Հայաստանում և չի նույնանում «Հայոց և Վրաց շահնշահին»: Ուստի կարող ենք արձանագրել, որ Անիի Գագիկի եկեղեցու վերոհիշյալ «Աշոտոյ արքայից արքայի» հիշատակությունը կարելի է ընկալել որպես «Աշոտոյ արքայից արքայի [Հայոց Մեծաց]»: Փաստորեն, այդ տիտղոսը կամ Անիի տիրակալի այդ կարգավիճակը գոյություն ուներ դեռևս Աշոտ Գ-ի ժամանակ:

Փաստորեն, կարելի է պնդել, որ Գագիկ Ա-ն զուգահեռաբար կիրառում էր թե՛ «Հայոց և Վրաց շահնշահ», թե՛ «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսները: Դրանցից առաջինը խալիֆայությունից ստացված և միջազգայնորեն ճանաչված տիտղոսն էր՝ ներկայացնելով Բագրատունի գահակալի գերագահ դիրքը Հայաստանում և քրիստոնյա Այսրկովկասում, ուստի պատահական չէ, որ այն հիշատակված է նաև վրացական սկզբնաղբյուրում: Իսկ երկրորդն արտացոլում էր նրա գերակայությունը Մեծ Հայքի մյուս թագավորությունների նկատմամբ, որոնց միավորման և կենտրոնախույս ձգտումները սանձելու համար Գագիկ Ա-ն ջանք չէր խնայում:

Ակնհայտ է, որ Բագրատունի արքաների տիտղոսաշարում առկա են եղել տարբեր տարածքային ընդգրկում և նշանակություն ունեցող տիտղոսներ: Մասնատված և բարդ ներքին ու արտաքին քաղաքական պայմաններում խիստ գործունյա Գագիկ Ա թագավորը նախընտրում էր X դարի առաջին կեսից ի վեր միջազգայնորեն ճանաչված «Հայոց և Վրաց շահնշահ» տիտղոսը, սակայն նաև իր գերակա կարգավիճակը Հայաստանում արձանագրելու համար կրում «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսը:

Արման Եղիազարյան – ***Գագիկ Ա Բագրատունին և նրա տիտղոսները***

Բագրատունյաց Հայաստանի պատմության մեջ իր կարևոր տեղն ու դերն ունի Գագիկ Ա Բագրատունին (990-1018), որը խիստ գործունյա թագավոր էր և փորձում էր վերականգնել Բագրատունի առաջին արքաների հզորությունը և տիրապետության սահմանները: Նրա գահակալության շրջանում բարձրացավ թագավորության՝ անկում ապրած միջազգային հեղինակությունը և ազդեցությունը տարածաշրջանային գործընթացներում: Մյուս կողմից, երկիրը մշակութային մեծ վերելք ապրեց և այդ առումով հասավ գագաթնակետին: Միջնադարյան հեղինակներն արձանագրել են նշված իրողությունները, որի արդյունքում պատմագրության մեջ հիմնականում գերիշխում է այն կարծիքը, որ Անիի թագավորությունը Գագիկ Ա-ի օրոք հասել է ոչ միայն մշակութային, այլ նաև ռազմաքաղաքական հզորության գագաթնակետին, ինչը նոր մոտեցման և վերանայման կարիք ունի: Հոդվածում քննության են առնված նաև Գագիկ Ա-ի տիտղոսները, որոնցից նա նախապատվությունը տալիս էր «Հայոց և Վրաց շահնշահ» և «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսներին: Դրանցից առաջինը Բագրատունի արքաների՝ միջազգայնորեն ճանաչված տիտղոսն էր, իսկ երկրորդն արտահայտում էր Հայաստանում Գագիկ Ա-ի գերակա կարգավիճակը:

Арман Егиазарян – *Гагик I Багратид и его титулы*

Ключевые слова *– Гагик I, Смбат I, Ашот Еркат, первоисточники, титул, царь Армении и Грузии, миродержец, шахиншах, царь царей Великой Армении*

Гагик I Багратид (990-1018) занимает особое место и играет важную роль в истории Багратидской Армении. Будучи влиятельным и деятельным правителем, он пытался восстановить мощь первых царей Багратидов и границы их правления. В период его правления возросли частично утраченный международный престиж царства и его влияние в региональных процессах. С другой стороны, при Гагике I страна пережила большой культурный подъем: в этом отношении страна достигла пика своего процветания. Средневековые авторы зафиксировали вышеупомянутые реалии, в результате чего в арменоведении в основном преобладает мнение о том, что при Гагике I царство Багратидов достигло пика не только культурного процветания, но и военно-политического могущества. Это мнение нуждается в новом подходе и пересмотре. В статье также исследуются титулы Гагика I, из которых он предпочитал «Шахиншах Армении и Грузии» и «Царь царей Великой Армении». Первый из этих титулов был международно признанным титулом Багратидских царей, а второй отражал верховный статус Гагика I в Армении.

Arman Yeghiazaryan – *Gagik I Bagratid and His Titles*

Key Words *– Gagik I, Smbat I, Ashot Yerkat, primary sources, title, king of Armenia and Georgia, master of the universe, shahnshah, king of the kings of the Greater Armenia*

Gagik I Bagratid (990-1018) occupied a special place and played an important role in the history of Bagratid Armenia. He was a very powerful monarch and tried to restore the power and boundaries of the rule of the first Bagratid kings. During his reign, the kingdom's partially lost international prestige and its influence in regional processes increased. On the other hand, under Gagik I, the country experienced a great cultural upsurge: in this respect, the country reached the peak of its prosperity. Medieval authors recorded the aforementioned realities, as a result of which it is generally believed in Armenian studies that under Gagik I the kingdom of the Bagratids reached the peak of not only cultural prosperity, but also military-political power, which requires a new approach and revision. The article also examines the titles of Gagik I, of which he preferred the titles “Shahnshah of Armenia and Georgia” and “King of the kings of Greater Armenia”. The first was an internationally recognized title of the Bagratid kings, and the second expressed the highest status of Gagik I in Armenia.

Ներկայացվել է 18.01.2022
Գրախոսվել է 24.02. 2022
Ընդունվել է տպագրության 29.03.2022

Արման Եղիազարյան – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (armanyeghiazaryan@ysu.am)